լուած երեսներով են դրոշմում իրենց դէմ-քերը դրամների վրայ, Հելլէնացիների նման, հակառակ աւանդական Պարսկական սովորութեան, ուր Դենպեռ-Արքան անշուշտ պիտի կրէր իր մօրուսը, իբր հայրական եւ պապենական իշխանութեան նշան: Այս խիստ պատճառով Պարթեւներին աջակից Իրանի միւս ցեղերը սկսան ատել նրանց եւ այս ատելութիւնը հինգ դար տեւեց: Արշակունիներին որպէս բռնակալների ատում էին աղգարնակութիւնը Ինդոսից մինչեւ Տիգրիս, մանաւանդ Էլամացի պարսերը:

Աղեքսանդր Մակեդոնացուն դրկաբաց դիմաւորեցին արքայից-արայի սատրափների անդուսպ կողոպուտներից ազատուելու տենչով բռնուած արեւելեան ժողովուրդները: Բնակչութեան տրամադրութիւնը եւ օժանդակութիւնը Աքեմենեան յափշտակած կալուածները յանձնեցին աշխարհակալին, բայց երբ երիտասարդ յաղթողը ինքն անձամբ հրդեհեց Իրանի ժողովրդի դարերով կուտակած մտաւոր եւ նիւթաւոր հարստութիւնը՝ Պերսեպոլիսը, արեւելքի աղգարնակութիւնը զրկեց արտօնուած յունական վաճառականական եւ կալուածատիրական իրաւունքներից, տենչացած եւ երազած հաւասարութիւնն ու անդորրութիւնը չգտաւ առաջաւոր-Ասիան, երկրագործ դասը կորցրեց Զրադաշտական օրէնքներով ունեցած իրաւունքները, այնպէս զղջացին իրենց ան-